

ՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՊԷՍ ՄՏՆԷ ԻՆՁ ՄՕՏ

2 ԹԱԳԱՎՈՐԱՑ 6:1-12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչ Դավիթը նախաձեռնեց իր թագավորության առաջիկա օրերում:

- **Ուղտի տապանակը բերել Երուսաղեմ**
- **Եվ նախապատրաստել տաճարի կառուցման իրերը, Քահանաներին, Դատավորներին, երգչախումբը...**

ՍՈՒՐԲԳՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ.

1 Եւ Դավիթը դարձյալ ժողովեց Իսրայէլի բոլոր ընտիրները՝ երեսուն հազար հոգի: 2 Եւ վեր կացավ գնաց Դավիթը և իր հետ եղող բոլոր ժողովուրդը Հուդայի Բաաղից, որ այնտեղից Աստուծո տապանակը վեր բերէ, որի վրա կոչուած է քերովբէների վրա նստող Զօրաց Տիրոջ անունը: 3 Եւ դրին Աստուծո տապանակը մէկ նոր սայլի վրա, և նորան վեր առան Աբինադաբի տանից, որ այն բլրի վրա էր. Եւ Աբինադաբի որդիները Ոզան ու Աքիովը քշում էին այն նոր սայլը: 4 Եւ վեր առան նորան Աստուծո տապանակի հետ Աբինադաբի տանից, որ բլրի վրա էր. Եւ Աքիովը գնում էր տապանակի առաջից: 5 Եւ Դավիթը և Իսրայէլի բոլոր տունը խաղում էին Տիրոջ առաջին ամեն տեսակ մայր փայտերով, քնարներով, տավիղներով, թմբուկներով, դափերով և ծնծղաներով: 6 Եւ երբոր եկան Նաքոնի կալը, Ոզան ձեռքը մեկնեց Աստուծո տապանակին և բռնեց նորան. Որովհետև եզները ծռել էին նորան: 7 Եւ Տիրոջ բարկությունը բորբոքուեց Ոզայի դէմ, և Աստուած զարկեց նորան այնտեղ այս հանցանքի համար. Եւ նա մեռավ նույն տեղը Աստուծո տապանակի մօտ: 8 Եւ Դավիթը տրտմեց, որ Տէրը հարվածով հարվածեց Ոզային, և այնտեղի անունը մինչև այս օրը Փարէզ-ողա է ասվում: 9 Եւ Դավիթը վախեցավ այն օրը Տէրից, և ասեց. Տիրոջ տապանակը ի՞նչպէս մտնէ ինձ մօտ: 10 Եւ Դավիթը չուզեց Տիրոջ տապանակը տանել իր մօտ Դավիթի քաղաքը. Եւ Դավիթը ծռեց նորան տարավ Գէթացի Աբդեդօմի տունը: 11 Եւ Տիրոջ տապանակը մնաց երեք ամիս Գէթացի Աբդեդօմի տանը, և Տէրը օրհնեց Աբդեդօմին և նորա բոլոր տունը: 12 Եւ Դավիթ թագավորին պատմեցին ասելով. Տէրը օրհնեց Աբդեդօմի տունը և նորա ամեն ունեցածը Աստուծո տապանակի համար: Եւ Դավիթը գնաց և վեր առավ Աստուծո տապանակը Աբդեդօմի տանիցն ուրախութեամբ Դավիթի քաղաքը:

I. Մենք պետք է ինքներս մեզ պատրաստենք Իր ներկայության համար: We have to prepare our self for His presence.

3 Եւ դրին Աստուծո տապանակը մէկ նոր սայլի վրա, և նորան վեր առան Աբինադաբի տանից, որ այն բլրի վրա էր. Եւ Աբինադաբի որդիները Ոգան ու Աքիովը քշում էին այն նոր սայլը: 4 Եւ վեր առան նորան Աստուծո տապանակի հետ Աբինադաբի տանից, որ բլրի վրա էր. 6 Եւ երբոր եկան Նաքոնի կալը, Ոգան ձեռքը մեկնեց Աստուծո տապանակին և բռնեց նորան. Որովհետև եզները ծռել էին նորան:

- **Քանի որ նոր է չի նշանակում համատեղ է Աստծո խոսքին:**

- **Ինչո՞ւ են նրանք Աստծո ներկայությունը դնում սայլի վրա, որը քաշվում էր եզների կողմից: Ինչո՞ւ նրանք չեն պատվում Աստծուն և այն դնեն այդ քահանաների ուսերին, ինչպես որ Աստված էր ցանկացել, որ իրականացվի: Ինչ-որ մեկը անպատվում է Աստծուն: Եվ երբ Դուք Աստծուն պատիվ չեք տալիս, դա սովորաբար արժե մեկի կյանքը:**

- **Այս դեպքից հետո Դավիթը հասկացավ հիմնական պատճառը:**

Հեսու 3:1–6 Եւ Յեսուն առավօտ վաղ վեր կացավ, եւ ինքը եւ բոլոր Իսրայէլի որդիքը չուեցին Սատիմից, եւ եկան մինչեւ Հորդանանը. եւ անցնելուց առաջ այնտեղ իջեան արին:

3 Երեք օր հետո վերակացուներն անցան բանակատեղիի միջով Եւ ժողովրդին պատուիրեցին ասելով. Երբոր տեսնէք ձեր Տէր Աստուծո ուխտի տապանակը, եվ Ղևտացի քահանաներին ու մեր քահանաներին նորան տանելիս, դուք էլ ձեր տեղերից չուեցեք, և նորա ետևից գնացէք. 4 Բայց ձեր և նրանց միջև երկու հազար (900 մետր) կանգունի չափ հեռավորություն պիտի լինի: Կանգնեցէ՛ք և մի՛ մօտեցէք նրան, որպէսզի իմանաք այն հանապարհը, որով պիտի գնաք, որովհետև երէկվա և նախորդ օրվա հանապարհով չէք գնալու: Եւ Հեսուն ասեց ժողովրդին. 5 Սրբեցէք ձեր անձերը. որովհետև Տէրը էգուց ձեր մեջ հրաշքներ է անելու: 6 Եւ Հեսուն ասեց քահանաներին. Թէ Վեր առէք ուխտի տապանակը, և անցէք ժողովրդի առաջ: Եւ նորանք վեր առան ուխտի տապանակը. և գնացին ժողովրդի առաջից:

15 Եւ հէնց որ տապանակը վեր առնողները մինչև Հորդանան հասան և տապանակը վեր առնող քահանաների ոտքերը ջրի եզերքի մէջ մխուեցան, 16 Այն ժամանակ վերևից իջնող ջրերը կանգնեցին... և ժողովուրդը Երիթովի դէմ անցկացավ: 17 Եւ Տիրոջ ուխտի տապանակը վեր առնող քահանաները Հորդանանի մէջ ցամաքի վրա հաստատ կանգնեցին. և բոլոր Իսրայէլը ցամաքով անցավ, մինչև որ բոլոր ժողովուրդը Յորդանանովն անցնելը վերջացրեց:

- **Մեր երկրպագությունը կարող է լինել մարդկային սովորություններից բխված:**

1 Թագավորաց 6:12 — Երկու հատ կաթնատու երինջ առան, և նորանց լծեցին սալլին, և նորանց հորթերին տան մէջ փակեցին: 11 Եւ Տիրոջ տապանակը դրին այն սալլի վրա:

II. Աստծո ներկայությունը նշան է, որ սրբությունը բնակվում է վրանում: The presence of God is a sign that holiness dwells in the tent.

Եւ Դավիթը գնաց և վեր առավ Աստուծո տապանակը Աբդեղօփի տանից ուրախութեամբ Դավիթի քաղաքը: 13 Եւ երբոր Տիրոջ տապանակը վեր առնողները վեց քալլ առաջ գնացին, նա արջառ ու պարարտ գուարակ գոհեց:

17 Եւ Տիրոջ տապանակը բերին, և նորան իր տեղը դրին այն վրանի մէջ՝ որ Դավիթը նորա համար կանգնեցրել էր. Եւ Դավիթը Տիրոջ առաջին ողջակեզներ և խաղաղութեան գոհեր մատուցեց:

Ելից 29:43 — 43 Եւ այնտեղ կհանդիպեմ Իսրայէլի որդիներին, և խորանը իմ փառքով սուրբ կլինի: 44 Եւ ժողովքի խորանն ու սեղանը կսրբեմ. Ահարօնին և նորա որդիներին էլ կսրբեմ, որ ինձ քահանայութեան անեն: 45 Եւ Իսրայէլի որդիների մէջ կբնակվեմ, և նորանց Աստուած կլինիմ:

- **Ամեն մի հավատացյալ պետք է ապրի Եսայի մարգարե Տիրոջ ներկայության մեջ:**

Եսայի 6:3 – Եւ մէկը կանչում էր միւսին և ասում. Սուրբ, Սուրբ. Սուրբ է Ձօրաց Տէրը. բոլոր երկիրը լիքն է նորա փառքովը: 4 Եւ դրանդիքի հիմերը երերացին աղաղակողի ձայնից, և տունը ծուխով լցվեց: 5 Եւ ես ասեցի. Վա՛յ ինձ, որովհետև կորած եմ. Որովհետև ես պիղծ շրթունքով մարդ եմ, և ես պիղծ շրթունքով ժողովրդի մէջ եմ բնակվում, և իմ աչքերը տեսան Ձօրաց Տէր Թագավորին: 6 Եւ սերովբէների մէկը թռավ ինձ մօտ՝ ձեռքին մի կրակի կայծ, որ ունելիքով առել էր սեղանի վրայից. 7 Եւ նորանով դպավ իմ բերանին և ասեց. Ահա սա դպավ քո շրթունքներին, և քո անօրէնութիւնը հեռացավ, և քո մեղքը քավուեցավ:

Ամփոփում

Ել. 33:15 - 15 Եւ Մովսէսն ասեց նորան. Եթէ քո ներկայությունը մեզ հետ չգնա, մեզ այս տեղից մի հանիր:

Then Moses said to him, "If your Presence does not go with us, do not send us up from here.